ՎԱՐԴԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

ԳՈՐԱՆ ՑԵՂԱՄԻԱՎՈՐՈՒՄԸ

Գորան կամ գուրան անվանումը լայն իմաստով գիտական գրականության մեջ կիրառվում է գորանի լեզվով (ավելի ճիշտ գորանիի բարբառներով) խոսող գորանիախոս էթնիկ խմբերին բնորոշելու համար (գորան եզրի մասին մանրամասն՝ Ասատրյան): Սակայն պետք է ճշտել, որ այս անվանումը պատկանում է, նախ առաջ, գորան ցեղամիավորմանը և միայն հարմարության համար կիրառվում գորանիախոս մյուս զանգվածների համար (Minorsky, p. 77)։ Այսպիսով, պետք է տարբերակել գորան ժողովուրդը (գորանիախոս էթնիկ տարրը) և գորան ցեղամիավորումը[1], որին էլ մանրամասն կանդրադառնանք այս ակնարկում։

Տեղաբաշխումը. Գորան ցեղամիավորումը զբաղեցնում է Իրանի Քերմանշահան նահանգի արևմտյան և կենտրոնական շրջանները։ Հարավում այդ տարածքը սահմանափակվում է Էսլամաբադ- Հոումե- Շոմալի- Հասանաբադ, իսկ հյուսիսում՝ Ղասր- և Շիրին-Զոհաբ-Հոլուլի-Զամքան գծով, Արևելքում այս տարածքի սահմանները հասնում են գրեթե մինչև Քերմանշահ, իսկ արևմուտքում՝ իրանա-իրաքյան սահման։ Ցեղամիավորումը կենտրոնացած է Գորան, Բանզարդե, Ղալխանի, Զոհաբ, Փոշթ-Թանգ, Գահվարե, Ղալ՝է-Զանջիր, Մալլե-Քաբուդ և Քարանդ, Բիվենիջ, Ջեգարլու, Նասրաբադ, Փաթաղ բնակավայրերում։ Այստեղ գորան ցեղամիավորման թիվը, 1976 թ. տվյալներով, հասնում էր 70 հազարի (Soltani, pp. 321—322)[2]։

Ցեղերը և կլանները, սոցիալական կառույցի առանձին ուրվագծեր. Ինչպես իրանական և ոչ իրանական շատ ցեղեր, գորան ցեղամիավորումը ևս, ավելի շուտ տարածքային-տնտեսական, իսկ ոչ վաղ անցյալում՝ նաև ռազմական միավոր էր, քան արյունակ-

ցական կամ ծագումնաբանական միատարր հանրություն։ Այն բաժանվում է երկու մեծ ճյուղի կամ ցեղի (պրսկ.՝ թայեֆե)՝ գորան-ե դալ՛է-զանջիրի (այսուհետև՝ զանջիրի) և գորան-ե քարանդի (այսուհետև՝ քարանդի), որոնք էլ իրենց հերթին տրոհվում են բազմաթիվ կլանների՝ տոհմերի (պրսկ.՝ թիրե), գերդաստանների (պրսկ.՝ դուդման) և ծխերի (պրսկ.՝ խանվար)։ Գորանական այս երկու ցեղերի անվանումներում էլ տեղ են գտել նրանց կենտրոնական բնակավայրերի՝ Դալ՛է-Զանջիրի և Քարանդի անունները։

Նախկինում զանջիրի ցեղը բաղկացած էր իշխանական գերդաստանից (պրսկ. դուդման-ե դալեբ), որը հայտնի էր Միր-Խոսրովի, հետագայում՝ Յասեմի անունով, և յոթ կլաններից, որոնք կրում էին ընդհանրական՝ գորանի յոթ սուլթանական (պրսկ. հաֆթ սոլթանե-յե գորան) անունը։ Փաստորեն, զանջիրին իր բնույթով ռազմական-ցեղային համակարգ էր, որն էլ կանխորոշում էր սոցիալական կառույցի ենթարկումը առաջինի պահանջներին։ Իշխանական ընտանիքը ղեկավարում էր գորանական աշխարհազորը (պրսկ.՝ ֆոուջ), իսկ մյուս կլանների գլխավորները (պրսկ.՝ սոլթան)՝ աշխարհազորի յոթ դասակները։

Ներկայումս զանջիրի ճյուղի կորիզն են հանդիսանում դալխանի (ասվարի և բաճիրամի խմբերով), թոֆանգչի (երկու ճյուղով) և գանվարե ցեղերը, ընդ որում, վերջինս առաջին աշխարհամարտից հետո է առանձնացել դալխանիից։

Քարանդի ճյուղը բաղկացած է տասնչորս փոքր ցեղերից, որոնք կրում են իրենց բնակավայրերի անունները (Soltani, pp. 318—319, 421—423, Ասատրյան 21—22)։ Ինչպես և զանջիրի դեպքում, այստեղ էլ աշխարհազորի անհրաժեշտությունը պատճառ է դարձել սոցիալական կառույցի՝ ռազմականին ենթակայության և, չնայած մեր օրերում ռազմական-ցեղային ինստիտուտի կատարյալ վերացմանը, վերջինիս թողած հետքերը ակներև են։ Մասնավորապես ցեղապետը (պրսկ.՝ իլխան) միևնույն ժամանակ կրում է հրամանատար (պրսկ.՝ սարթիփ) տիտղոսը և այլն (Soltani, p. 466)։

Գորան ցեղամիավորման հոգևոր և քաղաքական-ռազմական իշխանությունների միմյանցից տարանջատումը արդեն փաստ էր Ղաջարական շրջանում, ինչը, ի դեպ, այս ցեղամիավորմանը զանազանում է աճլ-ի ճակլ դավանանքի հետևորդ մյուս ցեղերից։

«Քաղաքական» իշխանությունը ավանդաբար իրականացվում է վերոհիշյալ Ցասեմի (նախկինում Միր-Խուսրովի) ազնվականական կլանի կողմից։

Հոգևոր կառավարման լծակները իր ձեռքում է պահում Բարզանջի սեյիդների տոհմը (պրսկ.՝ օջաղ-ե սադաթ), որն ընդհանրապես անլ-ի ճակղի բոլոր հետևորդների մոտ վայելում է հսկայական հեղինակություն։ Միավորման առանձին ցեղերում (դալխանի, թոֆանգչի) նշանակալից դեր ունի նաև Հեյդարի հոգևորական տոհմը։ Անհրաժեշտ է նշել, իհարկե, որ հասարակության ցեղային կառուցվածքը մեր օրերում այլևս կորցրել է այն հստակ ու կանոնարկված բնույթը, որ ուներ անցյալում։

էթնիկ պատկանելության հիմնահարցը.

Չնայած գորան ցեղամիավորման մասին աղբյուրների շատ հաճախ իրարամերժ ու հակասական տեղեկությունները անմիջականորեն անդրադառնում և դժվարացնում են խնդրի լուսաբանումը, այսուհանդերձ, առանց որոշելու գորան ցեղամիավորման տեղը գորան ժողովրդի կազմում, անհնար է դառնում վերջինիս լիակատար և համապարփակ ուսումնասիրությունը։

Նախ, ընդհանրապես, ինչ չափանիշերով պետք է առաջնորդվել էթնիկ-լեզվական, դավանական և ցեղային այնպիսի խայտաբղետ պատկեր ունեցող մի տարածաշրջանում ինչպիսին Իրանի հյուսիս-արևմուտքն է և, մասնավորապես, գորանիախոս տարրի զբաղեցրած տարածքը[3]։ Գորան տարրը մյուսներից տարանջատելու նախապայմանը, մեր կարծիքով, պետք է համարել, նախ-առաջ, գորանիով խոսելու՝ գորանիախոս լինելու հանգամանքը։ Ընդ որում, նման հատկանիշներ, ինչպիսիք են՝ դավանանքը, էթնոնիմը, սոցիալ-հասարակական կացութաձևը, մշակույթի տարրերը, և այլն, պետք է դիտել որպես լրացուցիչ՝ օժանդակ միջոցներ։ Ընդհանրապես «դասական» գորան էթնիկ միավոր կարելի է ընդունել միայն ավրամանի (հավրամանի, հավրամի) ցեղը, որին բնորոշ են գորանիախոս (գորանիի հավրամի բարբառով), անլ-ի ճակղի հետևորդ լինելը, նստակյաց կենսաձևը, ոչ ցեղային, ավելի շուտ կրոնադավանական սոցիալական կառույցը։ Սակայն գորան էթնիկ միավորից չպետք է զատել նաև գորանիի ֆանդուլայի բարբառով խոսող, իսկ դավանանքով՝ տասներկու-իմամական շիա

հանդիսացող ֆանդալա ցեղը (զանգանա ոչ գորան ցեղամիավորման մեջ), իրաքում բնակվող զանգանա անվան տակ հանդես եկող սուննիադավան ցեղերը, որոնց բարբառը մոտ է ֆանդալայի բարբառին (Soltani, 242) և գորանիի բարբառներից մեկով խոսող և սուննի-շաֆի'ի ուղղության հետևորդ բաջալան ցեղամիավորման գերակշիռ մասը (Soltani, 883—884)։ Գորան էթնիկ տարրի անքակտելի մաս պետք է համարել նաև Իրանի Քերմանշահան և Քորդեսթան նահանգներում փոքրիկ կղզյակներով պահպանված գորանիախոս, հողագործ բնակչությանը։ Ընդ որում, թերևս միայն վերջինս է, որ լինելով գորանիախոս, միաժամանակ որպես էթնոնիմ (կամ, չի բացառվում, նաև որպես սոցիալական բնորոշում) կրում է գորան անունը։

Արդ, արդյո՞ք էթնիկապես գորան է գորան ցեղամիավորումը։ Այս միավորման ճնշող մեծամասնությունը, ըստ աղբյուրների տվյալների, խոսում է ֆալհուրիի բարբառներից մեկով (Soltani, pp. 371, 391)։ Քալհուրին, հավանաբար, պետք է համարել հյուսիս-լուրական բարբառ (ավելի ճիշտ՝ բարբառների համակարգ)՝ հագեցած քրդական, թերևս, նաև գորանական փոխառություններով։ Վերջին՝ գորանական փոխառություններով հարուստ լինելու և, ըստ երևույթին, գորանական սուբստրատ ունենալու հանգամանքը պետք է առավելապես վերագրել քալհուրիի այն բարբառին, որը տարածված է գորան ցեղամիավորման շրջանակներում։ Սոլթանին, խոսելով գորան ցեղամիավորման լեզվի մասին, այն բնորոշում է, որպես «քալհուրական քրդերեն՝ գորան բնակչության հատուկ բարբառ» (Soltani, 371, 391)[4]։ Նման արտահայտություն, հավանաբար, պետք է դիտել որպես վերևում ասվածի ապացույց։ Ուշագրավ է, սակայն, այն, որ հիշյալ ցեղամիավորման մեջ մտնող նստակյաց՝ ռա'իյաթ բնակչությունը խոսում է գորանիով (Soltani, p. 326, Soan:, pp. 381—382)։ Բացի այդ, գորանին մայրենի լեզու է նաև գորան ցեղամիավորման հոգևոր տոհմերի՝ սեյիդների համար։ Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ այն համարվում է անլ-ի հակդի դավանական և ընդհանրապես գրական լեզու նաև ոչ գորանների համար։

Իր մեջ ընգրկած էթնիկ զանգվածների տեսանկյունից հիշյալ ցեղամիավորումը կարելի է բնորոշել որպես լուրական-գորանական մի միավորում։ Դեռևս Շարաֆ-խանը, խոսելով ֆալհուր տի-

բակալների մասին, նշում է, «նրանց աշիրաթը (ցեղամիավորումը) կոչում են գորան» (Шараф-Намэ, с. 364)։ *Նկատի առնելով, որ քալհուրին և գորանին չեն կարող նույնացվել* (Минерский, с. 14) *և, հետևաբար, այդ լեզուների կրողներին ևս պետք է զանազանել, ապա «Շարաֆ-նամեհ»-ի այս միտքը, որը, ի դեպ, տեղիք է տվել բազմաթիվ թյուր կարծիքների, պետք է մեկնաբանել հետևյալ կերպ. արդեն 16-րդ դ. քալհուրական (լուրական) մեկ կամ մի քանի ցեղեր* էթնիկ գորան *ցեղամիավորման մասն էին, կամ ավելի ճիշտ՝ իշխող մասը։ Այս եզրահանգման օգտին է խոսում նաև այն փաստը, որ Միր-Խոսրովը, որի գերդաստանը մինչև օրս էլ* գորան *ցեղամիավորման իշխանական տոհմն է, ծագումով լուր, որի մասին վկայված է նաև* աճլ–ի ..ավղի *սուրբ գրքում՝* «Սարանջամում»*. այստեղ հանդես է գալիս որպես Սեյեդ Մոհամմադի մարմնավորում (պրսկ.՝* մազհար)՝ *Միր-Խոսրով Լորեսթանի անունով։ Իզուր չէ, որ դեռևս Սոնը նշում էր, որ «եթե անցկացվեն էթնոլոգիական հետազոտություններ, հնարավոր է, որ գորան ցեղը համարվի ոչ թե քրդական, այլ* լուրական *(ընդգծումը մերն է—Վ. Ո.) կամ պարսկական»* (Soane, p. *381)*։

Այսպիսով, գորան ցեղամիավորումը իր էթնիկ և լեզվաբանական պատկերով հիմնականում ներկայացնում է լուրական-գորանական պատմական մի հետաքրքիր համաձուլվածք, ըստ որում նրանում մինչև օրս պահպանվել է թե՛ մեկ և թե՛ մյուս էթնիկ տարրը, իհարկե չպետք է մոռանալ նաև փոխադարձ ձուլման փաստերը, որում լուրական տարրը լեզվական առումով «հաղթող» հանդիսանալով, այսուհանդերձ կրում է «պարտվածի» էթնոնիմը և, հավանաբար, նաև լեզվական տարրերը՝ սուբստրատի ձևով։ Գորան *ցեղամիավորման բազմատարր հանրությունը[5] միավորող թերևս միակ գործոնը պետք է դիտել ընդհանուր դավանանքը, այն է՝* աճլ–ի ճակղի *հետևորդ լինելը։*

Հաշվի առնելով այն հսկայական դերը, որը ժամանակին խաղացել են գորանիախոս տարրերը ներկայումս մեծամասամբ լուրականացված (քալհուրականացված) այս միավորման կազմավորման գործում և էթնիկ-լեզվաբանական տեսանկյունից անհնար համարելով այս ցեղախմբի դիտարկումը գորան ժողովրդի *կազմում, իհարկե բացառությամբ առանձին խմբերի, այսուհանդերձ առանց դրա մանրակրկիտ հետազոտման, թերևս անհնար է ամ-*

բողջական պատկերացում կազմել գորանական հանրության վերաբերյալ։

VARDAN VOSKANIAN

THE GORAN TRIBAL CONFEDERATION

The Goran tribal confederation is one of the most considerable tribal units in the NW of Iran. In this article we made an attempt to separate the concepts of the Goran tribe ane the Goran ethnic element. The Goran tribal confederation from the ethnic and linguistic points of view is a very interesting historical mixture of Lurs (Kalhurs) and Gorans (Gorani speaking population), in which the lingustic domination of the Lurs (Kalhurs) is attended with the preservation and dissemination of the Goran ethnonym among the ethnically non-Goran elements of the above mentioned confederation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Մենք չենք անդրադառնում գորան ցեղամիավորման մեջ ոչ վաղ անցյալում մտած, այսպես կոչված, ջաֆական fառյակին կամ ջաֆ–գօռան ցեղերին, քանզի դրանք ունեն ակներև քրդական հատկանիշներ, որոնց անդրադառնալը անտեղի է՝ լինելով հոդվածի ծավալից (Ջաֆ–գօռան միավորման մասին մանրամասն տե՛ս Ասատրյան, Sotlān)։

2 Բոլոր բնակավայրերի, էթնիկ անվանումների, անձնանունների և տերմինների համար հիմք է ընդունված ժամանակակից պարսկերենի տառադարձությունը, որոշ բացառություններով միայն։

3 Այս խնդրի որոշ կողմերին անդրադարձել է, թերևս, միայն Գ. Ասատրյանը (էջ 29—30)։

4 Ընդհանրապես մինչև օրս վերջնականորեն չի որոշված fալհուրիի տեղը իրանական լեզուների համակարգում։ Դրա պատճառներից մեկն էլ, թերևս, այս բարբառով կամ լեզվով գրառված նյութերի բացակայությունն է, այսուհանդերձ, հետազոտողների մեծ մասի կարծիքով, այն պետք է դիտվի լուրական բարբառների համակարգում (Курдоев, с. 18)։

5 Նկատի ունենք, որ ցեղամիավորման մեջ անընդհատ ձուլվել են նաև քրդախոս տարրեր, որի ապացույց կարող է լինել նաև ներկայումս քրդախոս (սորանիախոս) և սուննի շաֆի՛ի ուղղության հետևորդ ջաֆական ցեղերը։

Տե՛ս Գ. Ալաստրյան *Գուրաններ։ «Իրեն-նամէ»*, *Թիվ. 1 (2), 1995, էջ 21—30։*

К. Курдеев. Грамматика курдского языка на материале курманджи и сорани, М., 1978.

В. Минерский. Курды. Заметки и впечатления. Г., 1915.

Шараф-Намэ, т. I, М., 1967.

V. Minorsky, The Guran—BSOAS, XI,1 (1943), pp. 75—403.

E. B. Soane. To Mesopotamia and Kurdistan in Disguise, London, 1926.

M. A. Soltani. The Historical Geography and Comprehensive History of Kermarshahan, vol. 2, 1 2, Tehran, 1993 (in persian).